

«Ճամփորդի հարմարավետ American Express®-ի հետ» արշավի իրականացման պայմաններ

1. Ներածություն

1.1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից թողարկված American Express Gold, American Express Gold Debit քարտերի (այսուհետ՝ Քարտ(եր)) քարտատերերի (այսուհետ՝ Քարտատեր(եր)) համար Կազմակերպչի կողմից իրականացվում է «Ճամփորդի հարմարավետ American Express®-ի հետ» քարտերի արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2. Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները (այսուհետ՝ Պայմաններ):

1.3. Պայմաններին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am և <https://www.acba.am/amex-gold-promo/> հարթակում (այսուհետ՝ Հարթակ):

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1. կետում նշված կայքերում և Հարթակում:

2.3 Արշավի շրջանակում պարգևատրումները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Արշավի իրականացման ժամանակահատված է համարվում՝ 2026թ. օգոստոսի 24-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 24-ը ներառյալ:

3. Երաշխավորված պարգևատրում

3.1. Արշավի ժամանակահատվածում այն Քարտատերերին, ովքեր Հայաստանում և արտերկրում կիրականացնեն վճարային գործառնություններ (այսուհետ Գործառնություն), բացի ստանդարտ մեխանիզմով տրամադրվող MR միավորներից, կտրամադրվեն նաև լրացուցիչ Membership Rewards միավորներ (այսուհետ՝ MR միավոր) կամ պարգևատրումներ (այսուհետ՝ Պարգևատրում) ստորև նշված կարգով և սահմանաչափերին համապատասխան.

3.1.1. 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ և ավելի Գործառնությունների դիմաց.

- 12,000 (տասներկու հազար) լրացուցիչ MR միավոր կամ
- 70,000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամին համարժեք հավաստագիր

3.1.2. 4,500,000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ և ավելի Գործառնությունների դիմաց.

- 22,000 (քսաներկու հազար) լրացուցիչ MR միավոր կամ
- 130,000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամին համարժեք հավաստագիր

3.1.3. 6,500,000 (վեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ և ավելի Գործառնությունների դիմաց.

- 32,000 (երեսուներկու հազար) լրացուցիչ MR միավոր կամ
- 190,000 (հարյուր ինսուն հազար) ՀՀ դրամին համարժեք հավաստագիր:

3.2. Արշավի 3.1.1., 3.1.2. և 3.1.3. կետերում նշված Պարգևատրումների համար տրամադրվող հավաստագրերն ուժի մեջ են ստացման օրվանից մեկ տարվա ընթացքում:

3.3. Արշավի ընթացքում Պայմանների 3.1. կետում սահմանված Պարգևատրումը տրամադրվում է՝ հաշվի առնելով Քարտատիրոջ կողմից Բանկում գործող Քարտերով կատարված Գործառնությունների հանրագումարը: Յուրաքանչյուր հաճախորդին կարող է տրամադրվել Պայմանների 3.1 կետում սահմանված առավելագույնը մեկ Պարգևատրում:

3.4. Պայմանների 3.1. կետում սահմանված Պարգևատրումը տրամադրել միայն այն Քարտատերերին, ով Պարգևատրման տրամադրման պահին Բանկում կունենա գործող Քարտ:

3.5. Պայմանների 3.1. կետում սահմանված Պարգևատրումը Քարտատերերին կտրամադրվի բացառապես վերջիններիս կողմից Պարգևատրումը ստանալու համար 2026թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2027թ. փետրվարի 10-ը (ներառյալ) հատուկ այդ նպատակով ստեղծված Հարթակի միջոցով հայտ ուղարկելու և սահմանված բոլոր պայմաններին բավարարելու դեպքում:

3.6. Հարթակը հանդիսանում է Արշավի մասնակցության համար դիմելու միակ հարթակը:

3.7. Պայմանների 3.5. կետում սահմանված ժամկետում Բանկ չդիմելու դեպքում Արշավի շրջանակում տրամադրվող Պարգևատրումը չի տրամադրվի:

3.8. Հարթակի դիմումները հաստատվում են Կազմակերպչի կողմից՝ Քարտատիրոջ տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի անվավեր ճանաչել և չդիտարկել ներկայացված կեղծ կամ թերի դիմումները, ինչպես նաև իրավունք ունի կապ հաստատել դիմումը ներկայացրած Քարտատիրոջ հետ և ստուգել դիմումի իսկությունը: Եթե Քարտատերը հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների և դիմումում նշված տվյալների միջև առկա է անհամապատասխանություն, ապա Քարտատերը կտեղեկացվի դիմումը չեղյալ համարելու մասին:

3.9. Պայմանների 3.5. կետում սահմանված ժամկետում Բանկ դիմելու և հայտ ներկայացնելու դեպքում, արշավի ավարտից հետո առավելագույնը 40 աշխատանքային օրվա ընթացքում Բանկի աշխատակիցը կդիտարկի հայտը և կապ կհաստատի Քարտատիրոջ հետ արդյունքների մասին տեղեկացնելու նպատակով:

3.10. Պայմանների 3.1 կետում նշված Գործառնությունների համար սահմանված սահմանաչափերին չբավարարելու դեպքում Քարտատերերը կտեղեկացվեն դիմումը չեղյալ համարելու մասին:

3.11. Կազմակերպչի կողմից տեղեկացումներն իրականացվում են Քարտատերերի հետ էլեկտրոնային հասցեով կապ հաստատելու միջոցով:

3.12. Դիմումը Կազմակերպչի կողմից չեղյալ համարելու դեպքում Քարտատերը հնարավորություն կունենա կրկին դիմում ներկայացնել Հարթակում:

3.13. Արշավի պայմանների 3.1 կետում նշված Պարգևատրումները կտրամադրվեն մինչև 2027թ մայիսի 10-ը:

3.14. Արշավի պայմանների 3.1.1., 3.1.2 և 3.1.3 կետերում նշված Պարգևատրումների համար Կազմակերպիչը համագործակցում է Բանկի հետ համագործակցող Black Stone տուրիստական կազմակերպության հետ:

4. Ընդհանուր պայմաններ

4.1. Քարտից քարտ փոխանցումները, բանկային հաշիվների միջև փոխանցումները, ոչ հայաստանյան բանկերի կողմից սպասարկվող հյուրանոցների ամրագրման առցանց հարթակներում կատարված վճարումները, ապահովագրական ընկերություններին կատարված վճարումները, Քարտով կատարված կոմունալ վճարումները, հայաստանյան էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքները և բջջային օպերատորների գրասենյակներում կատարվող վճարումները չեն դիտարկվի որպես Գործառնություն:

4.2. Կից Քարտերի Քարտատերերը չեն կարող մասնակցել հիմնական Քարտից անկախ: Կից Քարտերով կատարված Գործառնությունները գումարվում են հիմնական Քարտով կատարված Գործառնություններին: Կից Քարտերով կատարված գործարքների արդյունքում կուտակված MR միավորները գումարվում են հիմնական Քարտի համար կուտակված MR միավորներին:

4.3. Գործառնությունների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվում Գործառնության կատարման ամսաթիվը: Ընդ որում՝ Քարտատիրոջ կողմից Պարգևատրման ստացման համար դիմելուց հետո մինչև Պարգևատրման տրամադրումը Արշավի շրջանակում հաշվարկված Գործառնությունների հետվերադարձ լինելու պարագայում նշված Գործառնությունները չեն հաշվարկվի:

4.4. Պայմաններում նշված Պարգևատրումները ենթակա չեն փոխարինման այլ ապրանքի, ծառայության կամ գումարի հետ:

4.5. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Արշավի շրջանակում տրամադրված Պարգևատրման որակի և համագործակցող տուրիստական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների համար:

4.6. Կազմակերպչի կողմից զեղծարար և/կամ առերևույթ կեղծ և/կամ հաճախորդի գործարար բնութագրին չհամապատասխանող և/կամ տնտեսական նպատակը չհիմնավորվող գործարքների վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտատիրոջ մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Վերոնշյալ չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: